

## Խառը թվեր

Բնական թվերի և կանոնավոր կոտորակների գումարը կոչվում է խառը թիվ: Խառը թվի գրառմանական մեջ եղած բնական թիվը կոչվում է խառը թվի ամբողջ մաս, իսկ կոտորակը՝ կոտորակային մաս:

### Օրինակ՝

$2\frac{3}{5}$ -ը խառը թիվ է, 2-ը ամբողջ մասն է, իսկ  $\frac{3}{5}$ -ը կոտորակային: Կարդացվում է՝ երկու ամբողջ երեք հինգերորդ:

$$2\frac{3}{5}=2+\frac{3}{5}$$

Ինչպես անկանոն կոտորակը գրենք խառը թվի տեսքով.

$$19:2=9(1\text{մն.})$$

$$\frac{19}{2}=9\frac{1}{2}$$

Ինչպես խառը թիվը գրենք անկանոն կոտորակի տեսքով.

$$4\frac{1}{2}=\frac{4\cdot 2+1}{2}=\frac{9}{2}$$

## Առաջադրանքներ

- Խառը թիվը ներկայացրեք բնական թվի և կանոնավոր կոտորակների գումարի տեսքով.

Օրինակ՝  $2\frac{3}{5}=2+\frac{3}{5}$

$$15\frac{2}{5} = 15 + \frac{2}{5}$$

$$110\frac{3}{7} = 110 + \frac{3}{7}$$

$$2\frac{9}{11} = 2 + \frac{9}{11}$$

- Թվերի գումարը գրի առեք խառը թվի տեսքով.

Օրինակ՝  $4+\frac{1}{5} = 4\frac{1}{5}$

$$12+\frac{3}{15} = 12\frac{1}{5}$$

$$117+\frac{7}{25} = 117\frac{7}{25}$$

$$120+\frac{13}{115} = 120\frac{13}{115}$$

- Անկանոն կոտորակը գրենք խառը թվի տեսքով.

Օրինակ՝  $19:2=9(1\text{մն.})$

$$\frac{19}{2}=9\frac{1}{2}$$

$$\frac{32}{3} = 10\frac{2}{3}$$

$$\frac{12}{5} = 2\frac{2}{5}$$

- Խառը թիվը գրենք անկանոն կոտորակի տեսքով.

$$\text{Օրինակ՝ } 4\frac{1}{2} = \frac{4 \cdot 2 + 1}{2} = \frac{9}{2}$$

$$2\frac{7}{12} = \frac{2 \times 12 + 7}{12} = \frac{31}{12}$$

$$5\frac{9}{30} = \frac{5 \times 30 + 9}{30} = \frac{159}{30}$$

$$7\frac{11}{30} = \frac{7 \times 30 + 11}{30} = \frac{221}{30}$$

$$3\frac{15}{22} = \frac{3 \times 22 + 15}{22} = \frac{81}{22}$$